

կան հարցի լուծումը համապատասխանում է ինչպէս հայերի, այնպէս և թիւրքաց պետական շահերին: Թիւրքերը իրանց ընդդիմադրութեամբ քանիցս բարդացրել են հարցը և նրանից ստեղծել են գորղեան հանգոյց, և վնչ նրանց, և թէ հարկ լինի կարել այդ հանգոյցը սրով»:

Կ. ՊՕԼՍԻ Ս. ՊԱՏՐԻՍՏՐՔԻ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՅԵՐԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԹՈՒՂԹԸ.

Կ. Պօլսի ամենապատիւ ս. Պատրիարք Տ. Չաւէն արքեպիսկոպոսն, ըստ սովորութեան նախկին պատրիարքների, վերջերս ուղղել է Տաճկահայոց ժողովրդին իւր շրջաբերական օրհնութեան թուղթը: Այդ օրհնութեան և ժողովրդի բոլոր խաւերին վերաբերող խրատական անդրանիկ թղթով նախ առաքում է Տաճկահայոց բոլոր հոգևոր և աշխարհական դասակարգերին իւր սիրոյ, խաղաղութեան և օրհնութեան ողջոյնները, ապա իւր պատրիարքական աթոռին արժանացման մասին է յայտնում, այնուհետև յորդոր է կարողում բոլոր ժողովրդոց լինել ճշմարիտ քրիստոնեայ և Աւետարանի քարոզութեանց հետևող աշակերտ, սիրել հայ եկեղեցին, սիրել կրթութիւնն և դաստիարակութիւնը, բաց անելով մայրենի դպրոցներ մանուկ սերնդի համար, հաւատարիմ մնալ հայ օջախին յատուկ ամուսնական սուրբ ուխտին. հաւատարիմ մնալ հայրենի երկրին, սիրել հայրենի հողը՝ օղն և ջուրը, հեռու մնալով զաղթականութեան ամենասարսափելի վտանգից, և ապա դառնալով եկեղեցու սպասաւորներին, ծնողներին, հրապարակախօսներին և հեղինակներին, ասում է հետևեալը.

«Ի ուք, Հայ Եկեղեցւոյ Հովիւք, մեզի գործակիցք, եպիսկոպոսք, վարդապետք, քահանայք, սարկաւազունք, դպիրք, հաւատարմաբար կատարեցէք ձեր պարտքերը, պայծառ և բարեկարգ պահեցէք մեր ս. Եկեղեցւոյն Աստուածային պաշտամունքը: Կենդանի խօսքի քարոզը՝ շինիչ և պարարիչ, հրեշտակային երգեցողութիւնը՝ զմայլեցուցիչ և մխիթարիչ, սրբազան ընթերցմունքը՝ կրթիչ և հոգեւորոգ, թող վերակենդանացնեն մեր Եկեղեցին:

Առաջնորդք, կադաչենք, արթնութեամբ և նուիրեալ գործունէութեամբ կատարեցէք ձեր վարչական պարտքերը: Քարոզեցէք Սուրբ Աւետարանը իր գերափայլ պարզութեան և կենսատու հաղորդականութեան մէջ, որպէս զի Աստուծոյ թագաւորութիւնը վերանորոգուի սիրտերու մէջ:

Քահանայք, որ հոգևոր հայրերն էք հայ սուներուն, կը յորդորենք որ հաւատքով, սիրով և արթնութեամբ ծառայէք Աստուծոյ սեղանին և ժողովուրդին, ի ժամու և տարաժամու համնելով անոնց հոգևոր պէտքերուն և կարօտութիւններուն, առանց զօշաքաղութեան, որպէս զի պարտքի գիտակցութեան թերացումով տեղի չտրուի տրբատունջներու և դժգոհութեանց:

Սարկաւազունք և դպիրք և այլ պաշտօնեայք Հայ Եկեղեցւոյս, կը պատուիրենք ձեզ՝ արթնութեամբ, սրբութեամբ և հաւատարմութեամբ կատարել ձեզի ինկած ծառայութեան և սպասարկութեան բաժինները: Ո՛վ մանկունք եկեղեցւոյ, դուք հայու ժամին հրեշտակներ էք, որ կոչուած էք գեղգեղաձայն փառաբանութեամբ պայծառացնել Աստուածային պաշտամունք: Սիրեցէք Հայու ժամն ու Պատարագը՝ պատկառանքով, փութաջանութեամբ և նախանձախնդրութեամբ:

Կոչում կ'ընենք նաև ձեզի, ո՛վ Հայ ժողովուրդ և պաշտօնական մարմիններ, յարգեցէք և քաջալերեցէք ձեր սուրբ Եկեղեցւոյն բոլոր աշխատաւորներն ու սպասաւորները: Վիճակի մը, եկեղեցւոյ մը բարեկարգ վարչութեան պայմաններուն ապացոյցն ու փաստը՝ աշխատանքն յարգելու և աշխատաւորը վարձատրելու մէջ է: Այս գիտակցութիւնը կը փափաքինք որ զօրանայ մեր առաջնորդական Վիճակներու և մեր եկեղեցիներու ելևմուտքը կառավարողներու և մատակարարողներու մտքին մէջ: Վասն զի այս գիտակցութեան տկարացումը մեր ժողովուրդին և վարիչներուն ներսը՝ սկսած է անտանելի ընծայել եկեղեցական կոչումը արժանաւորներուն, և ասպարէզի մը վերածել այդ կոչումը՝ անարժաններու համար:

Կոչում կ'ընենք ձեզի, հայրեր և մայրեր, սիրեցէք

ձեր զաւակները և ցոյց տուէք ձեր սէրը՝ Հայ զպրօցներ
 դրկելով զանոնք: Հակեցէք ձեր զաւակներու աճման և
 արբունքին. մեծցուցէք զանոնք մաքուր և անարատ՝ այն-
 պէս որ անոնք սիրեն ընտանիքը, ընտանեկան կեանքն ու
 յարկը և չսպառեն իրենց առնական և առաքինական ոյժերը,
 և ճշմարիտ Հայ զաւակներ լլլալով չդաւաճանեն Հայ օ-
 ճախին, Հայ ազգին տիրական պահանջներուն:

Կոչում կ'ընենք ձեզի, հայ ուսանողներ, պարոններ
 և օրիորդներ, որ սիրէք կանոնաւոր աշխատութիւնը, գիտ-
 նաք ձեր մարմինն բարոյական և ֆիզիքական թանկագին
 ոյժերուն յարգը: Ասոնք պէտք են ձեր կատարեալ յաջո-
 դութեան համար, ոչ միայն ձեր ուսանողութեան շրջան-
 ներուն, այլ նաև անկէ ետքը, աւելի մեծ չափով, մինչև
 ձեր կեանքին վերջերր: Դուք ազգին յոյսերն էք: Ինչ որ
 կ'արժէք հիմա, իբրև ուսանող, ետքը՝ այնչափ պիտի ար-
 ժէք ձեր ազգին համար: Յարգեցէք ձեր ծնողքը, ձեր մե-
 ծերը՝ գիտակցական յարգանքով և երախտագիտութեամբ:

Կոչում կ'ընենք ձեզի, հեղինակներ և հրատարակա-
 գիրներ, քննադատներ և հեղինակներ, ձեզի, բոլոր գրիչ
 գործածողներ հրատարակաւ, գիտցէք ձեր տաղանդին և
 դիւրութիւններուն արժէքը: Ազատեցէք հայ գրականու-
 թիւնն ու լրագրութիւնը ոչ միայն միտքի, զգացումի ախ-
 տաժէտ արտայայտութիւններէ, այլ և հայ լեզուի դէմ
 եղած մեղանշումներէ. ձեր գրիչը թող միշտ սուրբ և նուրբ
 լլլայ, մանաւանդ ամէնօրեայ հրատարակութիւններու մէջ:
 Թող խղճահարին անոնք, որ հաճոյք կ'ըզան չափազան-
 ցութիւններէ, յերիւրանքներէ, զրպարտութիւններէ, զրա-
 բանութիւններէ, որոնց շատ անգամ ի գուր նշաւակ կ'ըլլան
 մեր ազգին լուսագոյն աշխատաւորները: Մենք կը փափա-
 քինք բարձր տեսնել հայ լրագրութիւնը, հեռի գձուձ, կեղ-
 տոտ գրչակութիւններէ:

Կոչում կ'ընենք ձեզ, քաղաքական, կրթական, ակմբա-
 կան և այլ կազմակերպութիւններ և միութիւններ, իր
 համերաշխութեան գիտակցութիւնը զօրացնէք մեր մէջ:
 Սահմանադրական երկրի մը մէջ, գործելու և խօսելու ա-

դատութիւնը՝ նոյն ազգի, նոյն ժողովուրդի զաւակներուն մէջ, զիրար վարկաբեկելու, զիրար կործանելու, արիւնով խաղալու ձևերով պէտք չէ որ արտայայտուի: Մեր ազգը անգձեղի միութեան մը պէտք ունի: Երկրի և ազգի ճակատագրին նկատմամբ սրշափ ալ տարբեր ըլլան ուղղութիւններ և կարծիքներ, ատոնց արտայայտութիւնը թըշնամական ըլլալու չէ իրարու հանդէպ: Համերաշխութիւնը պայման է ոչ միայն յաջողութեան, այլ նաև կենցաղագիտութեան համար: Կուսակցական արատաւոր գործունէութիւններ և ընդհարումներ շատ սուղի նստան մեր դժբաղդ ազգին վրայ: Սրտանց կը ցանկանք վերջացած տեսնել այդ տխուր իրողութեանց շարքը և տեսնել ամէն կուսակցութիւն և կազմակերպութիւն իր սկզբունքին և ուղղութեան բարձրութեան վրայ և համախմբուած ազգին շահին շուրջը:

Կոչում կ'ընենք ձեզ, ուսուցիչներ և դաստիարակներ, դուք հայ ուսանող սերունդին երկրորդ ծնողներն էք, ձեր պաշտօնը շատ բարձր է և դժուարին: Գուրգուրացէք ազգի այս մատաղ յոյսերուն վրայ, դաստիարակեցէք զանոնք Հայու հաւատքով, Հայու նկարագրով, որպէս զի անոնք համոզումով, զիսնալով սիրեն ինչ որ իրենց Ազգին է: Ձեր ոչ միայն խօսքերէն այլ և ձեր վարքուբարքերէն սորվին անոնք մարմնի և հոգիի մաքրութիւնը, և ուժաւորուի անոնց մէջ անձնուէր և ընկերասէր կեանքի ոգին, չմարին անոնց ներքը՝ երկիւղած հաւատքին կայծերը, և չեղծուին ամօթի ու պատկառանքի զգացումները:

Կոչում կ'ընենք հայ մայրերու և քոյրերու, մանաւորապէս, որ պարզ կեանքի սահմանները չկոխտուն՝ մըրցելու համար աւելորդ ու անտանելի ծախքերու և շոայլութեան նորաձևութիւններու մէջ: Մենք Հայերս, պէտք չէ մոռնանք, որ փարթամ և ճոխ ազգ մը չենք: Ունինք գեղեցիկ աւանդութիւններ և սովորութիւններ և մանաւանդ զիտակցութիւն մը մեր ազգային վիճակին վրայ, որ պարտք կը դնեն մեր վրայ զգուշանալ այնպիսի տարօրինակութիւններէ, որ նորաձևութիւն անուան ներքև կուգան

պչրանքի և զարգարանքի բանաւոր պէտքերն ալ եղծել, ամօթի և զգաստութեան նուիրականութիւնը վերցնել, և անհանգուրժելի ծախքերով դժուարացնել օրինաւոր ամուսնութեան գործերը և առտնին կեանքի անգործութեան պայմանները: Գիտցէք, որ պարզ կեանքը, նոյն իսկ հագուստի կապուստի, արդուզարգի պահանջներուն մէջ, մաքուր, ազնիւ, մարդասէր նկարագրի մը ուղիղ, հարազատ արտացոլացումն է: Մենք՝ մեր ցեղին հոգեկան և նկարագրի գեղեցկութիւններուն դէմ վտանգ մը կը տեսնենք այն բոլոր տարօրինակ նամանողութիւններու և հետևողութիւններու մէջ, որոնք կ'աղքատացնեն քսակները, կը հիւժեն ընտանեկան կեանքի առողջ կազմը: Նորաձևութիւններու հետևիլ՝ ողջմտութեան ինդիք մըն է պարզապէս: Ամէն այլանդակութիւն նորաձևութիւն չէ: Մենք չենք ըսեր որ մի հետևիք վայելչութեանց, ո՛չ այլ կ'ըսենք թէ մի տարուիք այլանդակութիւններէ և տարօրինակութիւններէ, որոնք հակառակ են ողջմտութեան. Պարտք կ'զգանք հայ տիկիներու ուշադրութիւնը հրաւիրել այս կէտին վրայ:

Վերջապէս կոչում կ'ընենք, Հայ ժողովուրդ, քու ազնուական զգացումներուդ, զգօն խելքիդ, անհերքելի փորձառութիւններուդ, որպէս զի նիւթական և բարոյական ոյժերդ չվասնես. որովհետև ատոնց պէտք ունի հայ բրիտանէութիւնդ, հայ ազգայնութիւնդ, օսմանեան հայ քաղաքացիութիւնդ:

Այս երկրին մէջ բարենորոգմունք և բարեկարգութիւնք՝ մին մինակ կառավարութեան ջանքերով չէ որ կրնան գործադրուիլ: Օսմանեան պետութեան դրօշին տակ ապրող բոլոր ազգեր ու ցեղեր ուղղակի կամ անուղղակի պարտքեր ունին կատարելիք, ատոնց յաջողապէս գործադրութիւնը ապահովելու համար: Եւ դուն, Հայ ժողովուրդ, որ անսպառ յուսով ու կարօտով մը կ'սպասէիր բարենորոգմանց աւետիքին և ատոր գործադրութեան, գիտցի՛ր որ քու բոլոր պարտքերուդ կատարումը ունի կապ մը, աղերս մը ունի երկրին բարեկարգութեան հետ:

Եթէ դուն հաւատարիմ ես ծննդավայրիդ հողին, ջու-

բին, և լաւ երկրագործութիւն կ'ընես, գիտցիր որ լաւ կը ծառայես հայրենիքին և կը նպաստես բարենորոգմանց գործադրութեան: Եթէ դուն զարգացնես արհեստներդ ու արուեստներդ, և ապահովցնես ատոնց տեւականութիւնը, վստահ եզիր, նոյն ատեն հայրենասիրական պարտքերդ կը կատարես: Եթէ դուն կը շատցնես մանկապարտէզներու և նախակրթարաններու թիւը, ամենայնտին զիւրի մէջ դպրոց բանալով, գիտցիր որ նոյն ատեն հայրենիքին կը ծառայես և կ'օժանդակես բարեկարգութեան ծաւալման: Եթէ դուն կազմակերպուած ընկերակցութիւններով՝ առևտրական և շահակցական ձեռնարկութիւններ յաջողցնես, գիտցիր որ կը ծառայես հայրենիքիդ և զարկ կուտաս բարենորոգումներու հաստատութեան և ծաւալման: Եթէ դուն մատենագրական, պարբերական, օրական հրատարակութիւններդ նուիրես ճշմարտութեան, արդարութեան, ընկերսիրութեան դասին, գիտցիր որ հայրենիքի բարեկարգութեան նուիրուած ես արդէն:

Հայրենիքին ծառայելու, բարեկարգութեան գորավիզն ըլլալու համար, ամենէն առաջ հարկ է որ գիտնաս ծառայել քու անձիդ, համայնքիդ, եկեղեցիներուդ, դպրոցներուդ ազգային հաստատութիւններուդ, ընկերութիւններուդ և մամուլիդ:

Ամփոփուէ, ուրեմն, հայ ժողովուրդ, տէր եզիր ոյժերուդ, լաւ գործածէ զանոնք անհատական և ազգային ձեռնարկներու համար: Նուիրուէ եկեղեցիներուդ բարեկարգութեան և պայծառութեան, նուիրուէ դպրոցներուդ բազմացման և բարեկարգութեան: Օգնէ ազգային հիւանդանոցներուն և ի մասնաւորի Կ. Պօլսոյ Ս. Փրկչեան Հիւանդանոցին, որ քու տառապանքներդ կը թեթեւցնեն և եղբայրասիրական ու մարդասիրական զգացումներուդ արտայայտիչ են: Օգնէ Միացեալ Ընկերութեանց, օժանդակէ Ազգանուէր Հայուհեաց և Դպրոցատէր Տիկնանց Ընկերութեանց, որոնք հաստատուած են կրթութեան և դաստիարակութեան գործին ծաւալումը զիւրացնելու համար ծոցիդ մէջ և անմոռանալի արդիւնքներ տուած են և կուտան:

Նպաստէ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, որ ութը տարիներու ընթացքին մէջ Միութեան խորհրդանշան դարձաւ բոլոր Հայութեան մէջ, առանց եկեղեցւոյ և դաւանանքի խտրութեան, և մասնաւորապէս լաւ ծառայութիւններ ըրաւ այս երկրին, իր բացած և նպաստած դպրոցներով, իր հողագործական և երկրաշինական խելացի կարգադրութիւններով: Օգնէ, սատարէ ասոնց և ասոնց նման ուրիշ կազմակերպութիւններու, որոնք թէ Հայաստանի և թէ Կիլիկիոյ մէջ նուիրուած են ուսում և բարիք տարածելու գաւաղներուդ մէջ: Անձ զիւրութիւններ և միջոցներ քեզի, հայ ժողովուրդ, ծառայելու, աշխատելու և նուիրուելու համար Ազգին, Հայրենիքին, Աստուծոյն:

Կը մաղթենք և կ'աղօթենք, որ Ամենաբարին Աստուած, թափէ իր օրհնութիւնները իր փոքրիկ հօտին վրայ, որպէս զի, լուսաւորուած Ս. Աւետարանի լուսով, զօրանայ և յառաջդիմէ աստուածավայել կեանքին մէջ, առանց երկիւղի, և առատացնէ իւր շնորհները ամէնուն վրայ:

Կ'աղօթենք որ Տէրն Զօրութեանց խաղաղութիւն պարգևէ բոլոր աշխարհի և իւր Սուրբ Կամքին գիտութեամբը լուսաւորէ զայն:

Կ'աղօթենք որ Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի անգին արիւնով գնուած Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, իր լրութեամբը, իմաստնացած շնորհօք սուրբ Հոգւոյն հաստատուն և անշարժ ծառայէ իւր կոչման:

Աղօթենք միաձայն և միաբերան, Սրբազան բանաստեղծին հետ. «Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա՛, և զերկրպագուս անուանդ քում պահեա ի խաղաղութեան»: Ամէն:

ԶԱՒԷՆ ԱՐՔԵՊ. Տ. ԵՂԻԱՅԵԱՆ

Տուեալ ի Պատրիարքարանի Հայոց Կ. Պոլսոյ
[Յամի Տեառն 1914 և յամսեանն Յունիսի 8

Եւ ի Թուին Հայոց ՌԱԿԳ—1863

Ընդ թուահամարաւ 1

